

Ս. ԷԶՄԻԱՆՆԻ ՏՕՆԸ.

Ամսոյս 19 ին Ս. Էջմիածնի միաբանական Աւխտը հանդիսաւոր կերպով տօնեց Ս. Էջմիածնի հիմնարկութեան տօնը:

Նախ քան Ս. Պատարագը, Ս. Էջմիածնի զանգակատան պառաջ կատարուեց յատկացեալ մաղթանքը ի ներկայութեան բազմութեան: Մաղթանքի ժամանակ Արժ. Յուսիկ Վարդապետ Մովսիսեան աւուր պատշաճին յարմար ճառ կարդաց. հանդէսը վերջացաւ Տեղակալ Հօր — Ամենապատիւ Տ. Մկրտիչ Արքազան Արքեպիսկոպոսի օրհնութեամբ. անմիջապէս սկսուեց Ս. Պատարագը: Պատարագիչն էր Գերապատիւ Գրիգոր Ս. Արքեպիսկոպոս Սագինեանը: Հանգիսի շքեղութեան համար երկու վարդապետներ շապիկ էին հագել, մինը գպրապետութեան պաշտօնով իսկ միւսը Ս. Խորհուրդը վերաբերելու համար: Հանգիսաւոր սուրբ Պատարագից յետոյ Ս. Էջմիածնի ամառնային եւ ձմեռնային սեզանատանց մէջ սկսուեց ճաշկերոյթը սեզանակցութեամբ Վաղարշապատու քաղաքական աստիճանաւորների, ձեմարանական վարչութեան եւ աշակերտների, Վաղարշապատու առաջաւոր անձանց եւ Երեւանից եկած հիւրերի: ճաշկերոյթը զուարթ կերպով սկսուեց եւ վերջացաւ: Ճաշի ժամանակ ձեմարանի Գ. յսարանի ուսանող Պ. Ալէքսանդր Զուլուգեան ճառ կարդաց, իսկ Գեր. Տ. Գրիգոր Արքեպիսկոպոս Սագինեան բացատրելով աւուր նշանակութիւնը, օրհնեց եւ երախտագիտութիւն յայտնեց գէպի Ռուսաց ազգը եւ Վայսերական տունը, որի շնորհիւ Էջմիածինը տգատուելով բռնութիւններից այսօր ազատ շունչ է քաշում. Էջմիածնի հաստատութեան համար առաջարկուեց բաժակ սր գատարկուեց « Էջ միածինն ի հօրէ » շարականի երգասացութեամբ: Նորին Գերապատուութիւնը կենաց բաժակ առաջարկեց տեղակալ Հօր, միաբանական Աւխտի, Հայոց ազգի, եւ ի գէմն սեզանակից աստիճանաւորների Ռուս կառավարութեան բոլոր պաշտօնեաների համար. բաժակները գատարկուեցին ձեմարանի աշակերտների յարմարաւոր երգասացութեամբ: Աւրախ ճաշկերոյթը վերջացաւ ըստ նախնի սովորութեան՝ զանգակահարութեամբ: Երեկոյեանը ճրագալոյց կար եւ ձեմարանի աշակերտները բազմութեանը զուարճացնումէին

ներդաշնակ երգեցողութեամբ, որ վերջացաւ իրանց երեկոյեան տղօթքով: Այս հանդիսի համառօտ նկարագրութիւնը:

Կար մի ժամանակ, որ Էջմիածնի տօնը տօնվումէր խոռոչն ու խոտաւորներին ներկայութեամբ՝ որոնք աշխարհի ամենայն կողմերից հաւաքվումէին Էջմիածին, հազարդ գանուելու այն բոլոր խորհրդաւոր տօներին՝ որոնք յիշեցնումեն հայերի դարձը գէպի քրիստոնէութիւն: Հաւաքվումէին Էջմիածին համբուրելու գերեզմանները Ս. Հռիփսիմէի, Պայիանէի Յովհաննու Մկրտչի եւ Աթագինէ Նպիսկոպոսի, Ս. Լուսաւորչի աջը եւ Ս. Էջման տեղը՝ նոցա տօնի օրերը: Այդ տօները կատարուելիս են եղել շատ շքեղութեամբ եւ հանդիսաւոր կերպով: Ըստ նախնաւանդ սովորութեան՝ ցայսօր Ս. Էջմիածնի միաբանութիւնը աւուր պատշաճի շարականները երգելով՝ գնումէ յիշատակեալ վանքերը Ս. Պատարագ եւ պաշտօն կատարելու, սակայն վաղուց արդէն դադարել է ուխտաւորների ռաբը: Միայն Վաղարշապատի Ժողովուրդը բազմ ունի ականատես լինելու այդ սրտաշարժ հանդէսներին, ականջալուր լինելու խորհրդաւոր ժամասացութեանը եւ համբուրելու նուիրական տեղերը: Վաղուց է որ հեռաւոր հայերը իրանք իրանց զրկել են այդ բաւականութիւնից:

Մենք հայերս միայն զուարճութեան համար սիրումենք յաճախել ուխտատեղիները. իսկ Ս. Էջմիածինը եւ իւր շուրջը գտնուող վանորայք վաղուց արդէն դադարել են հայերին հրապուրելու գէպի իրանց: Պորա պատճառները շատ են եւ բազմատեսակ, որոնց մասին խօսել անհնար է Արարատայ էջերում:

Ինչո՞վ Ժողովուրդը կարող է կապուել իւր Մայր Աթոռի եւ այլ նուիրական սրբութեանց հետ, եթէ ոչ մերձաւոր յարաբերութեամբ ականատես լինելով բոլոր գործողութեանց՝ որ կատարվումեն Էջմիածնում. ինչո՞վ կարելի է հաստատել յարաբերութիւն՝ եթէ ոչ առաջնորդների եւ այլ եկեղեցական պաշտօնէից յորդորանքով:

Էջմիածնի համար այնքան նշանակութիւն չունին ուխտաւորների նուէրներն, որքան որ նոցա մէջ ազնիւ եւ սուրբ զգացումներ զարթեցնելը: Որքան Ժողովուրդը իւր ուխտաւորների ձեռքով հետամուտ կրկին Էջմիածնի գործողութեանց, Էջմիածնի վանականութիւնն էլ այնքան զգուշութեամբ կրկատարի իւր ստանձնած պարտաւորութիւնը:

Կար մի ժամանակ, որ Էջմիածնի եւ Հայրապետի նուիրակ-
ները աշխարհի ամենայն կողմեր շրջելով՝ ամենին լսելի էին կա-
ղուցանում՝ այն ինչ որ հարկաւորն էր. չար բաղդով վաղուց
արդէն զազարել է նուիրակութիւնը:

Կար մի ժամանակ որ Էջմիածնի Միաբանութիւնը եկեղեցա-
կան թափօր կազմած վանքի արտաքին պարսպից ուխտաւորնե-
րի տհազին բաղմութեանը առաջնորդել է գէպի Մայր Տաճարը.
ուխտաւորների բաղմութիւնը սրտատրոփ եւ հոգեզմայլ ցնծու-
թեամբ ղանգակների որոտմամբ եւ «Էջմիածինն ի հօրէ» շարա-
կանի հնչմամբ մտել է մայր տաճարը համբուրել է Ս. Իջման
տեղը, Ս. Լուսաւորչի աջը եւ այլ սրբութիւնները. եւ շարթօր-
եայ ժամանակով մնալով Ս. Էջմիածնում, ուսումնասիրել է իւր
մայր Աթոռի փիճակը, ծանօթացել է վանականների հետ. մինը
սկսել է իւր քաղաքի համար առաջնորդացու անձն որոնել.
միւսը՝ հոգեւոր հովիւ ուրիշը՝ նուիրակ եւին. եւին: Նահապե-
տական պարզութիւնը հայրապետին եւ իւր ժողովրդին ներքին
եւ սուրբ կապով կապելով, առանց խտրութեան ժամերով խօ-
սակից, սեղանակից եւ խորհրդակից է արել իրար, երկու կող-
մից էլ հասկացել են միմեանց ցաւերը եւ դարման տանելու հա-
մար խորհրդածել, Անցել են այդ ժամանակները:

Արարատի խմբագրութեան մնումէ ցանկանալ որ ժողովուր-
դը իւր Մայր Աթոռի հետ կապուած լինի որդիական սիրով.
ինչ որ հին ժամանակը գործվումէր նահապետական պարզու-
թեամբ՝ այժմ՝ երանի թէ կատարուէր գիտակցաբար:

ՀԱՅ ԲՈՂԱՔԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԱՄԵՐԻԿԱՆ ՄԻՍԻՍԵՐԻՔ. *)

Ահաւասիկ այս տարի ևս տեղի կունենայ Ամերիկեան Միսիօնարաց
տարեկան ժողովն յԱմերիկեան խան. ինչպէս արդէն յայտնի է այս
տարի արտաքոյ կարգի պիտի լինի Միսիօնարաց տարեկան ժողովն:

(*) Այս յօդուածը՝ որ տպուած է սիւէրճէմանը Էֆքիտրոս լրագրի Մայիսի 13 եւ 14
ին հրատարակուած համարներում, խմբագրութիւնս արժան համարեց արտատպել
Արարատայ մէջ